ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Սիսիան **24/10/2024**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 20 անդամներ:

Բացակա էր՝ Ավագ Ասատրյանը

Ավագանու նիստին մասնակցում էին՝
Աննա Կարապետյանը, Անի Սահակյանը, Երվանդ Եղիազարյանը, Դավիթ Այվազյանը, Կորյուն Մուրադյանը, Նարա Հովհաննիսյանը, Վեյնամին Թանգյանը, Նարեկ Հովսեփյանը, Արմեն Խաչատրյանը, Գոհար Սրապյանը, Սուսաննա Սահակյանը

Նիստը վարում էր համայնքի ավագանու անդամ՝ Սուրեն Վարդանյանը

Նիստն արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Կարեն Իվանյանը

Ավագանու նիստն իրավազոր էր և հայտարարվեց նիստը բացված:

Նիստն ուղիղ հեռարձակվում էր:

Աշխատակազմի քարտուղար Կ. Իվանյանը զեկուցեց, որ նիստին ներկա գտնվելու համար հայտ է ներկայացրել «Սյունյաց երկիր» մարզային թերթը, որը կներկայացնեն Սամվել Ալեքսանյանն ու Վահրամ Օրբելյանը, ովքեր էլ կլուսաբանեն ավագանու նիստը: Նիստին կմիանա նաև ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ Սեյրան Ավետիսյանը: Սահմանված կարգով նիստը կվարի նիստին ներկա ավագանու տարիքով ավագ անդամը՝ Սուրեն Վարդանյանը:
Ս. Վարդանյանը ողջունեց ներկա գտնվողներին և ներկայացրեց օրակարգի հարցերը, ու հավելեց օրակարգում լրացուցիչ հարց ներառել. «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին»:
Օրակարգը դրվեց հաստատման:

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍՈՒՐԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 65-րդ հոդվածով.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2024 թվականի հոկտեմբերի 24-ի արտահերթ նիստի օրակարգը՝
   1) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ղեկավարի արտահերթ ընտրության մասին.
   2) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ղեկավարի երդման արարողության կազմակերպչական հարցերի մասին.
   3) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 084-Ա/

Նախքան օրակարգի 1-ին հարցին անդրադառնալը, Ս. Վարդանյանը հայտարարեց, որ խմբակցություններն առաջադրեն համայնքի ղեկավարի իրենց թեկնածուին: «Քաղաքացու որոշում» և «Հայաստանի Հանրապետական» խմբակցությունները չառաջադրեցին իրենց թեկնածուն, իսկ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունն առաջադրեց Հովսեփ Առաքելյանի թեկնածությունը:

Առաջադրված թեկնածու Հ. Առաքելյանը հանդես եկավ իր ելույթով:

Ելույթից հետո թեկնածուին հարցեր առաջադրեցին:

Հարց ու պատասխանից հետո տեղի ունեցավ բուռն քննարկում:

Ելույթ ունեցավ նաև ավագանու անդամ Ջիվան Մարգարյանը:

ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ Սեյրան Ավետիսյանը ներկայացրեց նաև համայնքի ղեկավարի ընտրության անցկացման կարգը:

Ելույթներից հետո տեղի ունեցավ բաց քվեարկություն: Ամփոփվեց քվեարկության արդյունքները և 14 կողմ քվեարկված քվեաթերթիկների արդյունքում համայնքի ղեկավար ընտրվեց Հովսեփ Առաքելյանը: 6 ավագանու անդամ չմասնակցեցին քվեարկությանը:

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍՈՒՐԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգրքի (սահմանադրական օրենք) 142.3-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով ավագանու անդամների բաց քվեարկության արդյունքներն ու նիստը վարողի հայտարարությունը.

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ղեկավար է ընտրվում Հովսեփ Հրաչի Առաքելյանը:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 085-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՐԴՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍՈՒՐԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասով.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ղեկավարի երդման արարողությունը տեղի կունենա 2024 թվականի հոկտեմբերի 27-ին, ժամը 11:00-ին:
2. Նիստը տեղի կունենա Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզ ք. Սիսիան, Սիսական 44Ա հասցեում՝ «Համո Սահյանի անվան Սիսիանի քաղաքային մշակույթի կենտրոն» ՀՈԱԿ-ի դահլիճում:
3. Սիսիան համայնքի ղեկավարի երդման արարողության կազմակերպչական հարցերի պատասխանատվությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի վրա:

Աշխատակազմի քարտուղարը զեկուցեց, որ համայնքի ղեկավարն իր լիազորություններն ստանձնում է իր ընտրվելուց հետո՝ երրորդ օրացուցային օրը, ավագանու՝ օրենքի ուժով հրավիրված նիստում համայնքի բնակիչներին տրված երդմամբ, այդ պարագայում երրորդ օրը լինում է կիրակի՝ ոչ աշխատանքային օր, հոկտեմբերի 27: Ավելացրեց նաև, որ հյուրեր շատ կլինեն, նախընտրելի է նիստը անցկացնել «Համո Սահյանի անվան Սիսիանի քաղաքային մշակույթի կենտրոն» ՀՈԱԿ-ի դահլիճում:
Հարցը դրվեց քվեարկության:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-5

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 086-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍՈՒՐԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2024 թվականի նոյեմբերի 8-ին, ժամը 16:00-ին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամ Հայկ Հակոբյանն առաջարկեց հերթական նիստը գումարել 2024թ. նոյեմբերի 11-ին, առաջարկը դրվեց քվեարկության:

Կողմ-7 Դեմ-13 Ձեռնպահ-0

Հարցը դրվեց նորից քվեարկության, և նոյեմբերի 8-ին՝ ժամը 16:00-ին գումարվեց հերթական նիստը:

Կողմ-13 Դեմ-1 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 087-Ա/

Ավագանու անդամներ Աննա Ավետիսյանը, Ջիվան Մարգարյանը, Դավիթ Դավթյանը, Անի Հարությունյանը, Գևորգ Դավթյանը և Մարինե Գրիգորյանը չմասնակցեցին քվեարկությանը:

Ավագանու անդամներ

ԱՐՄԵՆԱԿ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

ԱՆԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՇՈՏ ԱՂԱՋԱՆՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՈՎՍԵՓ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԲԵԼԼԱ ԹԱՄՐԱԶՈՎԱ

ՀՐԱՉՅԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՆԱԽՇՈՒՆ ՅԱԶՈՒԼՅԱՆ

ՍՈՒՐԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՋԻՎԱՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԴԱՎԻԹ ԴԱՎԹՅԱՆ

ԱՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ԴԱՎԹՅԱՆ

ՄԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ

ՍՈՒՐԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Կարեն Իվանյանը

_____